Լավությո՛ւն արա, ջուրը գցիր՝ մի օր առջևդ կգա:

ԲԱՐԵԳՈՐԾ

ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ «ԳՈՒՐԳԵՆ ՄԵԼԻՔՅԱՆԻ՝ ՔԱՇԱԹԱՂԻ ԲԱԶՄԱԶԱՎԱԿ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ»

BAREGORTS, Մայիս 2024, № 1(61), БАРЕГОРЦ

ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԸՆԴԼԱՅՆՎԱԾ ՆԻՍՏԸ

Վերջերս Երևանում էր Օնտարիոյի Հայկական միացյալ խորհրդի հումանիտար հարցերի համակարգող, նվիրյալ հայ Խորեն Մարդոյանը: Նա Քաշաթաղի շրջանի վերաբնակեցման ժամանակ ցուցաբերում էր աջակցություն, այժմ էլ շարունակում է հայրենանվեր աշխատանքը և հերթական նյութական աջակցությունն էր բերել Օնտարիոյի հայկական միացյալ խորհրդի կողմից:

Խ. Մարդոյանը նաև ուղեկցում էր Օնտարիոյի «Global Medic» կանադական բարեգործական կազմակերպության անդամներ Կեթլինին, Ջեյմիին և Ստեֆանիին, ովքեր մարտի 28-ին ներկա գտնվեցին Հիմնադրամի հոգաբարձության խորհրդի ընդլայնված նիստին:

Քննարկվեցին նեղության մեջ հայտնված մեր ազգակիցներին նոր կենսապայմաններում օգնություն տրամադրելու կերպերը. որոշվեց, որ նիստի ավարտին հոգաբարձության խորհրդի անդամները հյուրերին հայ ընտանիքներ ուղեկցեն, որպեսզի նրանք բռնագաղթվածների վիճակին ծանոթանան: Նիստի ավարտից հետո հյուրերը այցելեցին բռնագաղթվածների ընտանիքներ և իրենց ձեռքով հանձնեցին բերված նվերները:

Հոգաբարձության խորհուրդը կանադացի հյուրերի հետ միասին

ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՇՆՈՐՀԱԿԱԼԱԿԱՆ ՆԱՄԱԿԸ՝ ՕՆՏԱՐԻՈՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՄԻԱՑՅԱԼ ԽՈՐՀՐԴԻՆ

«Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամը» իր խորին երախտագիտությունն է հայտնում Օնտարիոյի Հայկական միացյալ խորհուրդին՝ այս դժվարին օրերին Արցախից էթնիկ զտման հետևանքով բռնի տեղահանված և Հայաստանի տարբեր բնակավայրերում ապաստանած մեր հայրենակիցներին ուշադրության արժանացնելու և նրանց նյութական օգնություն տրամադրելու համար:

Մարդասիրական Ձեր քայլի շնորհիվ բռնագաղթված շատ արցախցիներ կստանան նյութական շոշափելի օգնություն՝ կոշիկներ, հագուստ, ծածկոցներ:

Մեծապես շնորհակալ ենք նաև էլեկտրոնային ինտերակտիվ գրատախտակի համար, որը, հուսով ենք, մեծապես կնպաստի մատաղ սերնդի մեր հայրենակիցների մտավոր զարգացմանն ու աշխարհայացքի ընդլայնմանը:

Սիրելի՛ հայրենակիցներ, ձեր այս հայրենանվեր ու ազգօգուտ նախաձեռնությունը քաջալերում է բոլորիս և առավել շատ՝ տուն ու տեղից, հայրենիքից զրկված արցախահայերին, որոնք այսօր բարոյական ու նյութական հենարանի կարիք ունեն:

Կրկին մեր շնորհակալությունը Օնտարիոյի Հայկական միացյալ խորհրդի բոլոր անդամներին:

Հիմնադրամի գործադիր տնօրեն՝ (ստորագրություն)
պրոֆ. Գ. ՄԵԼԻՔՅԱՆ
Հոգաբարձ. խորհրդի նախագահ՝ (ստորագրություն)
պրոֆ. Ա. ԱՎԱԳՅԱՆ

ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏԵՂԱՀԱՆՎԱԾ ԱՐՑԱԽՑԻՆԵՐԻՆ

Այսօր բռնի տեղահանված ու ՀՀ-ում ապաստանած արցախցիներն ունեն աջակցության կարիք տարբեր առումներով:

«Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամը», որ գրեթե 30 տարվա պատմություն ունի, մշտապես է եղել Արցախի ու արցախցիների կողքին: Այժմ հիմնադրամը փոխել է աշխատաձևը. արցախցիներին աջակցություն է ցուցաբերում ՀՀ-ում՝ Արցախի հայաթափման հետևանքով:

"Global Medic"-ի ներկայացուցիչները Գ. Մելիքյանի հետ

Գ. Մելիքյանը որոշում է մեկնելու երթուղին

Այս օրերին Երևանում էին Կանադայի «Global medic» ընկերության ներկայացուցիչները, ովքեր առաջին անգամ են ծանոթացել «Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամ»-ի գործունեությանը և ցանկություն են հայտնել միասին այցելել տեղահանված արցախցիներին:

Մարտի 28-ին Հիմնադրամի գործադիր տնօրեն Գուրգեն Մելիքյանը, հոգաբարձուների խորհրդի նախագահ, Հայաստանի գրողների միության անդամ Արծրուն Ավագյանը, ԵՊՀ «Ապառաժ» լեռնագնացության ակումբի մարզիչ Սուրեն Սեփանյանը, Խորեն Մարդոյանը, «Global

medic»-ի ներկայացուցիչների հետ այցելեցին Երևանում բնակություն հաստատած արցախցի 5 բազմազավակ

Հաթերքից գաղթած Էրիկ Հակոբյանի ընտանիքում

ընտանիքների, ցուցաբերեցին նաև նյութական աջակցություն: 3 ընտանիք Մարտակերտի շրջանի Հաթերք գյուղից էին:

Էրիկ Հակոբյանն ունի 5 անչափահաս երեխա, բնակվում են Երևանի Էրեբունի վարչական շրջանում՝ բարեկամի տանը: Նեղվածք է, բայց ստիպված են միասին ապրել:

Անուշավան Սարգսյանի և Արփինե Հովհաննիսյանի ընտանիքում

Դժվար է բոլորի համար. Հաթերքում թողել են տուն ու տեղ այգի: Էրիկի մայրն արցունքներն աչքերին հայրենի գյուղի մասին է պատմում: Զրուցելով տեղահանված արցախցիների հետ, լսելով տխուր իրողության մասին՝ հյուրերն էլ են խիստ հուզվում:

Գևորգ Ավագիմյանի և Լիաննա Եդիգարյանի ընտանիքում

Անուշավան Սարգսյան և Արփինե Հովհաննիսյան ամուսիններն ունեն յոթ երեխա, որոնցից 5-ը դպրոցական են: Բնակվում են Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանում՝ վարձակալած տանը: Հաթերքում շեն ու առատ տուն են ունեցել: Դժվար է...

Գևորգ Ավագիմյանն ու Լիաննա Եդիգարյանն ունեն 4 երեխա, միակ դուստրը մեկ ու կես տարեկան Էմիլին է, ով դեռևս չի գիտակցում՝ ինչ է կատարվել, ինչպես է օրեր շարունակ անցել գաղթի ճանապարհով: Բնակվում են Արգավանդում: Որդիները սովորում են Արգավանդի միջնակարգ դպրոցում: Հաթերքի իրենց դպրոցն են կարոտում, համադասարանցիներին, հայրենի անտառները:

Սամվել և Ժենյա Օրդուբեկյանները Երևանից էին տեղափոխվել Քաշաթաղի շրջան: Սկզբում բնակվում էին Սոնասար գյուղում, այնուհետև՝ Բերձորում:

Օրդուբեկյանների ընտանիքում

Բազմազավակ ընտանիքի որդիներից Արայիկը, զոհվեց 2016 թ. սեպտեմբերին Ջրականում՝ մարտական առաջադրանք կատարելիս: Հուղարկավորված է Եռաբլուրում: Այժմ բազմազավակ ընտանիքը՝ 15 հոգով, բնակվում են բազմաբնակարանոց շենքի մի բնակարանում: Արցախի Մարտունու շրջանի Մաճկալաշեն գյուղն Արցախյան առաջին գոյամարտի տարիներին էլ մշտապես գտնվում էր թշնամու հարձակման կիզակետում: Բայց մնաց Մաճկալաշենը՝ հաղթահարելով բազում փորձություններ:

Ամարասի հարևանությամբ գտնվող սահմանապահ գյուղի գրեթե բոլոր տղամարդիկ զինվոր էին ու պաշտպանում էին հայրենի տունը: 2020 թ. պատերազմից հետո թշնամին ավելի մոտեցավ Մաճկալաշենին: Եվ գյուղի տղամարդիկ մշտապես հենակետերում էին: 2023թ. սեպտեմբերի 19-23-ին գյուղը մշտապես հրետակոծվում ու գնդակոծվում էր: Չնայած բազում խնդիրներին՝ գյուղի պաշտպանները մեծ կորուստներ պատճառեցին թշնամուն:

Բայց պարտադրվեց բռնագաղթը:

Կենաց-մահու մարտերում նաև մաճկալաշենցիներ նահատակվեցին: Այժմ Ջրվեժում է բնակվում պաշտպանական մարտերի մասնակից, անմահ հերոս-նահատակ Զորիկ Դանիելյանի ընտանիքը՝ կինը՝ Նուբար Դանիելյանը, դուստրը՝ Անգելինան, և որդիները՝ Ալբերտն ու Դանիելը:

Վարձակալած առանձնատանն են բնակվում: Պայմանները կարծես ծայրահեղ չեն, սակայն նրանք շատ բան են թողել թշնամուն, որ իրենց կենսագրությունն է: Հայրենի

անմոռաց հիշատակներն են դրանք, որոնց կարոտում են ամեն պահ:

Կանադացի հյուրերի հետ՝ Մանկապաշտպանից գաղթած Նուբար Դանիելյանի ընտանիքում

Կարոտում են Ամարասի ղողանջներին, հայրենի գյուղին:

Դժվար է Նուբարի համար. 2020թ. 44-օրյա մարտերում էլ զոհվել են նրա 2 եղբայրները, նահատակվել է նաև ամուսինը, բայց պետք է դիմակայել մեծ ցավին:

Բոլոր տեղերում էլ կար հավատ՝ գալու է տունդարձի երանելի օրը: Հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը որոշել է տեղական արտադրողին նույնպես աջակցել՝ նրանից գնելով նյութական կարիք ունեցող ընտանիքներին տրամադրվող սնունդը, հագուստը և այլ պարագաները:

Խորհուրդը հավելեց նաև՝ արցախցիներին աջակցությունը շարունակական է:

Զ. Ըռքոյան

ՄԵՐ ՁՐՈՒՅԱԿԻՑՆ Է «ՄՏՔԻ ՁԱՐԿ» ՀԿ ՆԱԽԱԳԱՀ, ՓՈԽԳՆԴԱՊԵՏ ԱՐՄԵՆ ԲԱՅՐԱՄՅԱՆԸ

Թղթ.– Պրն. փոխգնդապետ, Դուք անցել եք Արցախյան առաջին պատերազմի բովով, ծանր վիրավորվել, բայց խիզախելով հաղթահարել եք անթիվ դժվարություններ, մեր հաղթանակը կերտողներից եք ու հիմա էլ նվիրումով շարունակում եք Ձեր հայրենանվեր գործունեությունը «Մտքի զարկ» բարեգործական կազմակերպությունում, որի օգնության ծրագրերում ընդգրկված են նաև վերջին պատերազմների մասնակից վիրավոր ու հաշմանդամ հայ երիտասարդներ:

Փոխգնդապետ Արմեն Բայրամյանը

«Բարեգործի» ընթերցողների անունից ողջունում եմ Ձեզ, Ձեր բոլոր սաներին ու շահառուներին: Հուսամ, որ մեր զրույցը կհետաքրքրի շատերին:

Ա. Բայրամյան (դիմելով Գ. Մելիքյանին)– Մեծարգո՛ պրն. Մելիքյան, ես նույնպես ողջունում եմ Ձեզ ու հիմնադրամի գործընկերներին: Ձեր աշխատավայր եմ եկել, որ անկեղծորեն զրուցենք, քննենք կատարվածն ու մեր անելիքները: Ընթերցողն այս յուրատեսակ հաշվետվությունից շատ բան կիմանա «Մտքի զարկի» և մեր համագործակցության, մեր համընդհանուր նպատակների մասին: Հենց սկզբից էլ ասեմ, որ նաև Ձեր Հիմնադրամի շնորհիվ բավականին շնորհաշատ երիտասարդներ ՀՀ բարձրակարգ կրթօջախներում այժմ ստանում են որակյալ կրթություն ու մասնագիտացում, ինչի համար շնորհակալ ենք :

Գ. Մելիքյան – Պրն. փոխգնդապետ, շատ բան կորցրած լինելով՝ դարձյալ ձգտում եք ուրիշներին պահել, նեղյալներին հասնել: Սա՛ է կարևորը. ապրում եք «Տո՛ւր ինձի, Տե՛ր, ուրախությունն անանձնական» կարգախոսով: Հայրենյաց սուրբ գործին զինվորագրված մարդը սրանով է հզոր: Դուք հզոր մարդ եք: Շնորհակալ եմ Ձեզ:

Ա. Բայրամյան– Մե՛նք ենք շնորհակալ: Մի բանի մասին եմ ուզում խոսել: Մենք ստացանք ծանր վիրավորում՝ ես և իմ սերունդը: Պատերազմում հաղթել էինք: Մեծ հաղթանակից հետո մեր դարավոր երազանքը իրականություն էր դարձել, թվում էր՝ վերածնունդ պիտի լինի, բայց մենք չգիտեինք՝ վաղը ինչ է լինելու: Դրսից մեկը չկար, որ մեզ գոնե խորհուրդ տար, չեմ ասում՝ օգներ: Մեզ պետք էր որակյալ կրթություն, կամք, նաև աջակցություն, որ մենք առաջ ընթանայինք: Այդուհանդերձ, մենք ինքներս ենք բռունցքներով ապառաժ փշրելով, կամքի ուժով գնացել առաջ: Հիմա, քանի որ այս ճանապարհն արդեն անցել ենք և փորձ ունենք, մեր դժվարին վիճակում հայտնված տղաներին ուզում ենք առաջնորդել:

Ս. Մուրադյանը և Գ. Մելիքյանը Ա.Բայրամյանի հետ

Եթե այս նախաձեռնությունը չլիներ, գուցե նրանք այսօր հոգեկան շատ ավելի դժվար վիճակում լինեին:

Թղթ.-Պրն. փոխգնդապետ, ընթերցողին կհետաքրքրի Ձեր գործունեության ռազմավարությունը: Վիրավոր, հաշմանդամ, անձնվեր այդ երիտասարդների մասնագիտական կրթությունն ինչպե՞սէ կազմակերպում «Մտքի զարկ»-ը, որի հիմնադիրն ու նախագահն եք Դուք: Ձեր ծրագրերը ներառու՞մ են արդյոք ժամանակակից տեխնոլոգիաներ, որոնք յուրացումով ձևավորվեն արդի առաջընթացին համապատասխան լիարժեք մասնագետներ, որոնք պիտանի լինեն մեր պետությանն ու հանրությանը:

Ա. Բայրամյան-Կարևոր ու հետաքրքիր հարց է: Ապագա ռազմավարությունից ոչ միայն մենք, այլև ծրագրի բոլոր շահառուները, որ ամենաթանկն են դրել, և այն տղաները, ովքեր իրենց արյամբ ու կյանքի գնով են ապահովել այսօրվա թեկուզև հեղհեղուկ խաղաղությունը, արժանի են բոլորիս համակ ուշադրությանը: Կարող ենք վստահորեն ասել՝ նրանք գիտակվում են, որ մեր նախաձեռնությամբ ու Ձեր Հիմնադրամի աջակցությամբ մեր նախկին հոսքի շահառուները այնպիսի հիմնավոր կրթություն են ստացել, որ այսօր աշխատաշուկայում պահանջված մասնագետներ են: Նրանք կարողանում են իրենց ոչ միայն հանապազօրյա հացը վաստակել, այլև օգտակար են լինում իրենց ընտանիքներին ու ընկեր բարեկամներին:

Ասեմ, որ նրանց վիրավոր ընկերներն ու զինակիցները նույնպես կարող են օգտվել այդ ծրագրից, լինել արդիական մասնագիտություն ստացած և աշխատանք ունեցող անձինք: Բացի այդ՝ տղաները մեծ ակնկալիք ունեն, որ ծրագրից կարող են օգտվել նաև իրենց զոհված ընկերների ընտանիքի անդամները:

Ինչպես «Հենք» հիմնադրամի, այնպես էլ «Մտքի զարկ» ՀԿ անունից մեր խորին շնորհակալությունն ենք հայտնում, որովհետև մեր ծրագիրը ամենածանր ու ամենաբարդ ժամանակահատվածում փակվելուց իսկապես փրկել է Ձեր հիմնադրամը: Խնդիրը, որին անխուսափելիորեն պիտի բախվեինք, տղաների հոգեբանական և սոցիալական ծանր վիճակն էր, որ պահանջում էր անհապաղ կարգավորում: Անչափ կարևոր էր և ուսումնական գործընթացի արագացումը: Մեզ պետք էին նաև մասնագիտությունները դասավանդող որակյալ մասնագետներ, որոնք 4-5 տարվա ուսումնական ծրագիրը կարողանային իրացնել ավելի կարճ ժամկետում, ասենք՝ գոնե մեկ տարվա մեջ: Անլուծելի թվացող այս խնդիրների լուծմանն իր աջակցությունը բերեց «Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամը», որի հետ մեր համագործակցությունը հույժ օգտակար եղավ թե՛ մեր կազմակերպության և թե՛ շահառուների համար:

Թղթ.-Երբվանից է գործում Ձեր ծրագիրը և մոտավորապես ո՛րքան դեռ պիտի գործի:

Ա. Բայրամյան-Այն սկսվել է 44—օրյա պատերազմից անմիջապես հետո, երբ արդեն ծանր վիրավորում ստացած, անորոշության և անհուսության մատնված շատ զինծառայողների ու կամավորների չէր հաջողվել ձեռք բերել որակյալ կրթություն:

Անցյալի դառը փորձից ելնելով՝ խնդիր դրեցինք՝ անհապաղ այցելել հիվանդանոցներում, հոսպիտալներում, վերականգնողական ու հոգեբանական կենտրոններում գտնվող տղաներին՝ նրանց ներառելով կրթական այնպիսի ծրագրերում, որ ոչ միայն հեշտությամբ ադապտացվեն-համակերպվեն հասարակությանը, այլև ձեռք բերեն դրամ վաստակելու լուրջ կարողություններ:

Ե՛վ գիտական և բիզնես շրջանակների, և՛ պետական քաղաքականություն իրականացնող մարդկանց հետ քննարկվել և ընտրվել են այնպիսի մասնագիտություններ, որոնք կհամապատասխանեին մեր շահառուների ֆիզիկական կարողություններին: Չէ՞ որ տղաների մեծ մասը անդամալույծ էին, ունեին հենաշարժական խնդիրներ: Լուրջ գումար վաստակելու և պահանջված մասնագետ պատրաստելու խնդրի որոնումները կանգ առան 21-րդ դարին բնորոշ և ապագային միտված՝ ծրագրավորման լեզուների և արհեստական բանականության վրա:

Պետք է ասենք, որ տղաները ոչ միայն արդարացրին իրենց, նրանք արագորեն յուրացրին արդի ծրագրավորման և մեքենայական ճարտարագիտության բարդ գաղտնիքները և արդեն գրում են համակարգչային այնպիսի ծրագրեր, որոնք աշխատում են թե՛ բիզնեսի շրջանակնետրում, թե՛ անվտանգային համակարգերում:

Թղթ.-Շնորհակալություն, պրն. փոխգնդապետ հետաքրքիր զրույցի համար: Դուք իսկապես անչափ կարևոր ազգօգուտ գործ եք կատարում: Ձեր գլխավորությամբ «Մտքի զարկը» և «Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամը» իրենց ակնհայտ մարդասիրական և ազգօգուտ գործունեությամբ՝ հայրենիքի զոհասեղանին ամեն ինչ անսակարկ դրած և այսօր նեղության մեջ հայտնված հայորդիներին և՛ հույս եք պարգևում, և՛ աշխատունակություն ու աշխատելու հնարավորություն, և մարդկային բարձր արժանապատվություն:

Մեր լավագույն մաղթանքները Ձեզ ու Ձեր բոլոր շահառուներին:

Սիրով տեղեկացնում ենք, որ «Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամը» նույնպես միացել է ‹‹Արցախյան մշակույթի պահպանման կենտրոն›› ՀԿ հայտարարած դրամահավաքին: Հիմնադրամի ղեկավար մարմինը որոշում է ընդունել կազմակերպությանը հանձնել Շմավոն Շմավոնյանի ‹‹Արարատ›› շքեղ պատկերազարդ ալբոմի 50 օրինակ՝ դրանք Արցախյան մշակույթի պահպանության համար հայտարարված դրամահավաքի խոշոր նվիրատուներին փոխանցելու պայմանով:

Հայկական բնաշխարհը գեղանկարչական բարձր արվեստով պատկերող այդ գրքերն առաջիկա օրերին կհասնեն հասցեատերերին: Այդ մասին տեղեկատվությամբ կհսվելով՝ միաժամանակ կկարողանանք հանրությանը ներկայացնել նաև մեր խոշոր նվիրատուներին:

Մեր կազմակերպությունն, ի դեպ, Արցախյան մշակույթի պահպանության համար հայտարարված դրամահավաքին միացած հերթական հիմնադրամն է: Այս կառույցն աջակցության բազմաթիվ ծրագրեր է իրականացրել Արցախում՝ ուշադրության կենտրոնում պահելով հատկապես Քաշաթաղի շրջանի բնակչությանը: Պատկերազարդ ալբոմը տպագրված է «Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամի» միջոցներով:

2024 թ. հունվար-ապրիլ յուրաքանչյուր ամիս պարբերաբար վճարված անվանական կրթաթոշակներ

h/h	Ստացող	Նպատակ
1	Ստեփանյան Եսթեր	Լուսինե Զաքարյանի անվ. կրթ., Շառլ Ազնավուրի անվ. մշակույթի և արվեստի պետ. քոլեջ
2	Արմասյան Կարեն	Լուսինե Զաքարյանի անվ. կրթ., Առնո Բաբաջանյանի անվ. պետ.երաժշտ. քոլեջ
3	Մելքոնյան Վիկտորիա	Լուսինե Զաքարյանի անվ. կրթ. Կոմիտասի անվ. ԵՊԿ
4	Փոդրատչյան Հայկ	Լուսինե Զաքարյանի անվ. կրթ. Ռոմանոս Մելիքյանի անվ. պետ. երաժշտ. քոլեջ
5	ԵՊՀ հիմնադրամ	Խորեն Պալյանի անվ. կրթ., Հայրապետյան Անգելինա, ԵՊՀ հայ բանասիրության ֆակ., հայոց լեզու և գրակ. 4-րդ կուրս
6	ԵՊՀ հիմնադրամ	Ստեփան Ալաջաջյանի անվ. կրթ., Վարդանյան Անահիտ,ԵՊՀ հայոց լեզու և գրակ. 3-րդ կուրս
7	ԵՊՀ հիմնադրամ	Դավիթ և Նազելի Չարչյանների անվ. կրթ. Պետրոսյան Արտյոմ, ԵՊՀ, քիմիայի ֆակուլտետ, 3-րդ կուրս
8	ԵՊՀ հիմնադրամ	Դավիթ և Նազելի Չարչյանի անվ. կրթ. Գասպարյան Աննա, ԵՊՀ, ֆարմացիա, մագիստր. 1-ին կուրս

Ընդամենը՝ 160 000 X 4 = 640 000

Հ.Գ. Հիմնադրամը կշարունակի տրամադրել անվանական կրթաթոշակները եկող ամիսներին ևս:

ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԵՐ

h/h	Ամսաթիվ	Հաստատություն	Ստացող	Գումար
1	3/18/2024	ԵՊՀ հիմնադրամ	Ալեքսանյան Կրիստինա, սփյուռքագիտ. մագիստր. 1-ին կ.	100000
2	3/12/2024	ԵՊՀ հիմնադրամ	Կրտիկաշյան Մարգարիտա, թյուրքագիտ. ամբ. ասպիրանտ	150000
3	3/12/2024	Հայկական պետական բժշկական համալսարանի	Սլդոյան Սինար, Բուժական ֆակ., 1-ին կ.	150000
4	3/12/2024	Հայկական բժշկ.ինստիտուտ	Հարությունյան Լավրենտի, ստոմատոլոգ, 2-րդ կ.	150000
5	3/12/2024	Մ. Խորենացու անվ համալսարան	Մկոյան Ալբերտ, կիրառ. մաթեմ. և ինֆորմ., 1-ին կ.	150000
6	3/12/2024	Բրյուսովի անվ. պետ. համալսարան	Մալախանյան Նարինե, սերիվս, 3-րդ կ.	100000
7	3/12/2024	ԵՊՀ հիմնադրամ	Խաչատրյան Մարիամ, հ.լ.և գրակ. 1-ին կ.	100000
8	3/12/2024	ԵՊՀ հիմնադրամ	Ասատրյան Աիդա, ԵԼՀ, միջմշ. հղրդ. 1-ին կ.	100000
9	3/12/2024	ԵՊՀ հիմնադրամ	Քեխյան Արմեն, տնտեսագիտ., 2-րդ կ.	100000
10	3/12/2024	ԵՊՀ հիմնադրամ	Ղարագյոզյան Լիլիթ, թյուրքագ. 4-րդ կ.	100000
11	3/12/2024	Ռուս-հայկական հմլս.	Հարությունյան Հարություն, ֆինանսներ,2-րդ կ.	100000
12	3/12/2024	ԵՊՀ հիմնադրամ	Խեչումյան Սաթենիկ, իրավագիտ. 3-րդ կ.	60000
13	3/12/2024	Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ	Ճաղարյան Սյուզաննա, տարրական կրթ. մանկ. և մեթոդ., 4-րդ կ.	50000
14	3/12/2024	Խ. Աբով. անվ. ՀՊՄՀ	Տոնոյան Հասմիկ, տ. կրթ. մանկ. և մեթ, 2-րդ կ.	100000
15	3/12/2024	Խ. Աբով. անվ. ՀՊՄՀ	Ավենիսյան Անահիտ, օտ.լ. 4-րդ կ.	100000
16	3/12/2024	Խ. Աբով. անվ. ՀՊՄՀ	Մկրտչյան Գոռ, տեղեկատ. տեխն. 5-րդ կ.	100000
17	3/12/2024	ԵՊՀ հիմնադրամ	Սարգսյան Դավիթ, իրանագիտ., 3-րդ կ.	100000
18	3/12/2024	ԵՊՀ հիմնադրամ	Խաչատրյան Քրիստինե, իրանագիտ., 3-րդ կ.	100000
19	3/12/2024	Հերացու անվ. ԵՊԲՀ	Ավանեսյան Լիլիանա, բուժ. գործ. 1-ին կ.	80000
20	3/12/2024	Հերացու անվ. ԵՊԲՀ	Ղարագյոզյան Տաթևիկ, ընդհ. բժշկ. 2-րդ կ.	100000
21	3/12/2024	Հերացու անվ. ԵՊԲՀ	Ղազարյան Մոնիկա, ընտանեկան ստոմօրդ, 1-ին կ.	100000
22	3/12/2024	Հերացու անվ. ԵՊԲՀ	Թանգամյան Շանթ, ընդհ. բժշկ. 2-րդ կ.	100000
23	3/12/2024	ԵՊՀ հիմնադրամ	Սարգսյան Էրիկ, միջազգ. հարաբ., մագիստ. 2-կ., հեռ.	80000
24	3/12/2024	ՃՇՀԱՀ հիմնադրամ	Մարգարյան Մանե, շինարատ. 4-րդ կ.	80000
25	3/12/2024	ՃՇՀԱՀ հիմնադրամ	Կարապետյան Տիգրան, ճարտարապ. 2-րդ կ.	100000
26	3/12/2024	ՃՇՀԱՀ հիմնադրամ	Ավանեսյան Ջուլիանա, ճրտրպ. 2-րդ կ.	80000
27	3/12/2024	ՃՇՀԱՀ հիմնադրամ	Մկրտչյան Ժան, ճտպ. 1-ին կ.	80000
28	3/12/2024	ՃՇՀԱՀ հիմնադրամ	Ոսկանյան Լուսինե, դիզայն 4-րդ կ.	150000
29	3/12/2024	ԵՊՀ հիմնադրամ	Վարդանյան Մենուա, թյուրքագիտ. 1-ին կ	80000
30	3/12/2024	ՀԱԱՀ հիմնադրամ	Մարկոսյան Հակոբ, ԱՊՀ էկոն. մագ. 1-ին կ.	80000
31	3/12/2024	ՀԱԱՀ հիմնադրամ	Ալեքսանյան Ռազմիկ, հող. և ջր. ռես. ճարտար. դիմորդ մագիստր. հեռակա	100000
32	3/12/2024	ՆԳՆ ճգնժ. կառ. պետ. ակ.	Գրիգորյան Հասմիկ, ճգն. կառ. 5-րդ կ..	70000
33	3/12/2024	ԱՈՒԱՀ Երևանի ԿԳԻ	Ղևոնդյան Անահիտ, բանկ. գործ և ապիվգր. 3-րդ կ.	100000
34	3/12/2024	Ստեփանյան Էդուարդ	Դասընթացի վճար	68000
			Ընդամենը՝	**4098000**

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
БИБЛИОТЕКА ИМ. САРКИСА И МАРИ ИЗМИРЛЯНОВ

YEREVAN STATE UNIVERSITY
SARKIS AND MARIE IZMIRLIAN LIBRARY

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՍԱՐԳԻՍ ԵՎ ՄԱՐԻ ԻԶՄԻՐԼՅԱՆՆԵՐԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Հ.Հ, Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1 • Республика Армения, Ереван, 0025, Алека Манукяна 1 • 1 Alex Manoogian, 0025, Yerevan, Republic of Armenia
(+374 10) 55-13-34 (Tel./Fax), library@ysu.am, www.ysu.am

№ _____ «__13__»_____3_____2024

Սույնով հավաստում և մեր շնորհակալությունն ենք հայտնում «Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամին» ԵՊՀ գրադարանին Հովհաննես Շիրազ «Անտիպ էջեր», Մկրտիչ Մկրյան «Հատընտիր», Արտաշես Պապոյան «Հայագիտական հետազոտություններ», Ֆլորա Սարյան «Երբ աստղերն են վայր ընկնում» Ֆլորա Սարյան «Զգրված օրենք», Խաչատուր Թահմազ «Համշենի բարբառի Ջենիկի խոսվածքը», Խորեն Պալյան «Լույս ի լուսոյ», Ստեփան Ալաջաջյան «Եղեգները չիսնարիվեցին», Ստեփան Ալաջաջյան «Չսպիացած վերք» (3 հատորով), Արծրուն Ավագյան «Պատկերազարդ պատմություն Շահան Շահնուրի», Լուսինե Սահակյան «Համշենը հայկական ձեռագրերում», Բարկէն Զուգասզեան «Երկերի ժողովածու» (հատ. 4), Սամվել Դիլանյան «Հին ու նոր հավատալիքներ», Ara Ketibian «The Genocide of the Ottoman Greeks», Վիոլետա Մնացականյան «Դիմապատկերներ և մտորումների խաչմերուկ», Զորայր Միրզայան «Պարսից գրականություն», Հայրապետ Մարգարյան «Նշանավոր իշխանական տները Հայաստանում», Ազատ Մաթյան «Ո՞րն է մեր հայրենին», Հաֆեզ «Գազելներ», Օմար Խայամ «Քառյակներ» և «Մատենադարանի պարսկերեն հրովարտակները» գրքերի օրինակներ նվիրելու համար:

Գրականությունը կհամալրի գրադարանային ֆոնդը և հասանելի կլինի օգտվողների համար:

Գրադարանի տնօրեն Ե.Միրզոյան

ՀՊՊՀ ԳՐԱԴԱՐԱՆ LIBRARY

МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ,
НАУКИ, КУЛЬТУРЫ И СПОРТА
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

THE MINISTRY OF EDUCATION,
SCIENCE, CULTURE AND SPORT
REPUBLIC OF ARMENIA
YEREVAN STATE UNIVERSITY

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀՀ, Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1 • Республика Армения, Ереван, 0025, Алека Манукяна 1 • 1 Alex Manoogian st., Yerevan, 0025, Republic of Armenia
(+374 10) 55-47-52, (+374 10) 55-46-41 (Fax), info@ysu.am, www.ysu.am

Սույնով հավաստում ենք, որ ԵՊՀ-ն Կարեն Կարապետյանի նվիրատվությամբ և «Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամի» աջակցությամբ ստացել է հետևյալ արժեքավոր գրքերը.

1. Paul G Hewitt. Conceptual Physics 2002
2. Paul G Hewitt. Conceptual Physics. Practicing Physics. 2002
3. Douglas C. Giancoli. Physics, Principles with Applications. 1991
4. Douglas C. Giancoli. Physics for Scientists & Engineers. P. 1. 2000
5. Douglas C. Giancoli. Physics for Scientists & Engineers. P. 3. 2000
6. Douglas C. Giancoli. Physics for Scientists & Engineers. P. 4. 2000
7. Hugh D. Young. University Physics. 1992
8. A.L. Stanford, J.M. Tanner. Physics for Students of Science and Engineering. 1985
9. R.A. Serway, R.J. Beichner. Physics for Scientists & Engineers with Modern Physics. 2000
10. Richard Wolfson, Jay M. Pasachoff. Physics, with Modern Physics for Scientists and Engineers. 1999
11. Ruth W. Chabay, Bruce A. Sherwood. Matter & Interaction. 2011
12. W. Thomas Griffin, Juliet W. Brosing. The Physics of Everyday Phenomena. A conceptual Introduction to Physics. 2012
13. Eugene Hecht. Physics: Calculus. 2000
14. Michael Ziegler. Introductor's Solutions Manual for Serway and Jewett's Physics for Scientists and Engineering. V. 1. 2010
15. Michael Ziegler. Introductor's Solutions Manual for Serway and Jewett's Physics for Scientists and Engineering. V. 2. 2010
16. Sen-Ben Liao. Introductor's Solutions Manual. Fundamentals of Physics. V. 1. 2008

Գրքերը կներառվեն ԵՊՀ գրադարանային հավաքածուում և կարտացոլվեն քարտարանում: Վստահ ենք, որ այն պիտանի կլինի պրոֆեսորադասախոսական կազմի և օգտվողների համար:

ԵՊՀ ռեկտոր Հ.Վ.Հովհաննիսյան

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՀԱՅ ԿՐԹԱԿԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ
HAMAZKAYIN ARMENIAN EDUCATIONAL AND CULTURAL SOCIETY

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ
0002, Երևան, Մաշտոց 37-14, 0002,Yerevan, 37 Mashtots,apt.14
Հեռ./Ֆաքս՝ (37410) 53.39.49, է-փոստ՝ hayastan@hamazkayin.com

N 05

17.04.2024

«Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի
բազմազավակ ընտանիքների հիմնադրամի»
գործադիր տնօրեն՝
պարոն Գուրգեն Մելիքյանին

Հարգարժան պարոն Մելիքյան,

Շնորհակալություն ենք հայտնում «Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների» հիմնադրամին Համազգային հայ կրթական և մշակութային միության Հայաստանի գրասենյակին Հովհաննես Շիրազի «Անտիպ էջեր» գրքից 12 օրինակ նվիրելու համար:

Մեր նպատակները նույնն են՝ մեծարել, նա մեկ անգամ գնահատել հանճարեղ բանաստեղծի գրական ժառանգությունը: Ապրիլի 26-ին մեր նախաձեռնությամբ Գյումրիում Հովհաննես Շիրազի տուն-թանգարանում տեղի է ունենալու նույնանուն գրքի շնորհանդեսը և գրական-երաժշտական երեկո նվիրված բանաստեղծի 110-ամյակին:

Հարգանքներով՝

«Համազգային» հայ կրթական և մշակութային միության
Հայաստանի գրասենյակի տնօրեն
Ռուզան Առաքելյան

ՄԵՐ ՀՈԲԵԼՅԱՐԸ՝ ԲԱԳՐԱՏ ՆԱԶԱՐՅԱՆ - 70

Մեծարգո՛ Բագրատ Նազարյան,

Վաղուց ի վեր Դուք մեր Հիմնադրամի գերազնիվ բարեկամն եք և հոգաբարձության խորհրդի բարեխիղճ անդամներից մեկը: Հայրենանվեր Ձեր գործը զարդարում է հայ մարդուն: Մեծ ներդրում եք ունեցել մեր Հիմնադրամի տարբեր ծրագրերի իրականացման մեջ՝ սկսած կարիքավոր բազմազավակներին սատարելուց, Արցախի վերաբնակեցումից մինչև ծառատունկ, մինչև անվճարունակ ուսանողների վարձավճարների ամբողջական կամ մասնակի մուծում: Իսկ Խնձորիստանում Ձեր կառուցած հյուրանոցը չեն մոռանա ուրիշ վայրերից այնտեղ տարիներով անվճար բնակվածները:

Սիրելի՛ հոբելյար, հիմա, երբ հայաթափված Արցախից բռնի տեղահանված տնազուրկ արցախահայությունը հիմնականում ապաստանել է ՀՀ-ում, և աղետյալ մեր հայրենակիցներին առաջնահերթ օգնություն հասցնելը դարձել է Հիմնադրամի գերխնդիրը, դարձյալ Դուք առաջամարտիկ եք Ձեր մարդկային վեհությամբ ու պատրաստակամությամբ:

Մեծարգո՛ Բագրատ Նազարյան, Ձեր ծննդյան 70-ամյակի առթիվ ընդունեք Հիմնադրամի հոգաբարձության խորհրդի ջերմաջերմ շնորհավորանքն ու հոբելյանական լավագույն մաղթանքները: Երկար կյանք ու առողջություն Ձեզ, որ վայելեք մեր ժողովրդի գալիք հաղթանակներն ու ազգային երազանքների իրականացումը:

ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

* * * \

ՄԵՐ ԲԱՐԵՐԱՐ «ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱՆ»

Վերջերս Հիմնադրամի հոգաբարձության խորհրդի նախագահ պրոֆ. Ա. Ավագյանն ու գործադիր տնօրեն Գ. Մելիքյանն այցելեցին ¦Գազպրոմ Արմենիա§ ՓԲԸ ¦Ուսումնասպորտային համալիր§ հաստատության դպրոցի տնօրեն Ալեքսանդր Կոնստանտինի Գրիգորյանին:

Արդեն ո՛րերորդ անգամ այդ հաստատությունը օգնության ձեռք է մեկնում մեր Հիմնադրամին…

ГАЗПРОМ АРМЕНИЯ

ՀԱՎԱՍՏԱԳԻՐ

ՏՐՎՈՒՄ Է

Առ այն, որ «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ «Ուսումնա-սպորտային համալիր» հիմնարկի դպրոցի բարեգործական ցուցահանդես-վաճառքից ստացված հասույթի մի մասը՝ 1.000.000 ՀՀ դրամ, ուղղվում է «Գուրգեն Մելիքյան» Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամին՝ աջակցելու նպատակով:

«09» փետրվարի, 2024 թ. Տնօրեն Գրիգորյան

Նվիրատվության հավաստագիրը

Այս այցելության ընթացքում էլ կնքվեց պայմանագիր, որով մեկ միլիոն ՀՀ դրամ փոխանցվեց մեր Հիմնադրամին:

«Մեր համալիրում,– ասաց հիմնադրամի վաղեմի բարեկամ Ա. Գրիգորյանը,– կազմակերպված ամենամյա ցուցահանդես-տոնավաճառից ստացված հասույթից 1.000.000 ՀՀ դրամ փոխանցվեց «Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամին»:

Հիմնադրամի գործադիր տնօրեն Գ. Մելիքյանն էլ նշեց, որ այս տարի գումարը կուղղվի Արցախից բռնի տեղահանված երեխաների համար իրականացվող աջակցության ծրագրերին:

Հիշեցնենք, որ ցուցահանդես–վաճառքից ստացվել էր ընդհանուր 3.712.000 ՀՀ դրամ, որից մեր սաների ծնողների նվիրաբերած գումարը կազմել է 1.454.000 ՀՀ դրամ, աշխատողների նվիրաբերածը՝ 2.258.000 ՀՀ դրամ:

Ծնողների նվիրաբերած գումարը փոխանցվել է «Զինվորի տուն» վերականգնողական կենտրոնին, իսկ աշխատողներինը՝ Արցախից տեղահանված երեխաներին:

Ալ Գրիգորյանն ու Գ. Մելիքյանը պայմանագրի ստորագրման պահին

ՍՏԱՑԱԿԱՆՆԵՐ ԵՎ ՇՆՈՐՀԱԿԱԼԱԳՐԵՐ

ՍՏԱՑԱԿԱՆ

1. 02. 2024

«Շիրակի մարզային գրադարան» ՊՈԱԿ-ը «Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամից» անհատույց ստացավ գրականության հետևյալ քանակությունը.

№	Գրքի հեղինակ	Վերնագիր	Միավոր
1	Մուխտար Աուեզով	Աբայ	1
2	Յու. Սուվարյան	Հայկական պետականության կառավարչական հիմնախնդիրները	1
3	Ֆ. Սարյան	Չգրված օրենք	1
4	ԱԵԳՄ	Գիտական Արցախ	1
5	ԵՊՀ	Հայագիտության հարցեր	1
6	Հ. Մարգարյան	Նշանավոր իշխանական տները Հայաստանում	1

7	Ստ. Ալաջաջյան	Եղեգները չխոնարհվեցին	1
8	ԵՊՀ	Ղազախական հեքիաթներ	1
9	Լ. Գևորգյան	Հավերժում ապրող հորս Արցախից	1
10	Վ. Սրապյան	Հայ ռազմավարական միտքը	1
11	Ա. Պուշկին	Արձակ երկեր	1
12	ԵՊՀ	Քնար համալսարանի	1
13	Վ. Մաղալյան	Դաղեթ Խաչեն	1
14	Ս. Աղաջանյան	Մշակույթի տեսություն	1
15	Ժ. Մանուկյան	Երևանի պետական համալսարանի տարեգրություն	1
16	Ա. Ավագյան	Ստ. Ալաջաջյանի «Եղեգները չխոնարհվեցին» վեպը	1
17	Խ. Մանուկյան	Անմահականս	1
18	Վ. Մնացականյան	Դիմապատկերներ և մտորումների խաչմերուկ	1
19	Զ. Ըռքոյան, Մ. Կումունց	The historical and cultural heritage of the Nagorno – Karabakh conflict zone	1
		Ընդամենը՝	19

«Շիրակի մարզային գրադարան» **ՊՈԱԿ-ի տնօրեն՝ (ստորագրություն, կնիք) Գևորգ Ամիրյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ ՀԻՄՆԱՐԱՐ ԳՐԱԴԱՐԱՆ

13.04.2023

ՍՏԱՑԱԿԱՆ

Խորին երախտագիտությամբ հայտնում ենք, որ

«Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամից» ստացանք.

1. Թամազ Խ., Համշենի բարբառի Ջենիկի խոսվածքը, Եր., 2023 (4 օրինակ)
2. Ալաջաջյան Ստ., Եղեգները չխոնարհվեցին, Եր., 2022 (2 օրինակ)

Ընդամենը՝ 6 օրինակ:

Ընդունեց՝ (ստորագրություն, ձվաձև կնիք)

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԱՐՑԱԽԻՑ ՏԵՂԱՀԱՆՎԱԾ ԳՅՈՒՂԵՐԻ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻՆ՝ «ԹԵՔԵՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ» ՄԻՋՈՑՈՎ. ԴՊՐՈՑՆԵՐԻ ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ՇՆՈՐՀԱԿԱԳՐԵՐԸ

Արցախի Շուշիի ենթաշրջանի Եղցահող, Մեծ Շեն, Հին Շեն, Լիսագոր և Ասկերանի շրջանի Դարհավ գյուղերի դպրոցների ուսուցիչներին «Թեքեյան կենտրոն հիմնադրամի» կոմից «Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամի» միջոցով տարիներ շարունակ փոխանցվել է դրամական օգնություն: Դրամը հավասարաչափ դրվում էր ծրարների մեջ, երբեմն էլ Կանադայից եկած ներկայացուցչի մասնակցությամբ, տարվում էր Արցախ և թափանցիկ բաժանվում ուսուցիչներին:

Փոխվեցին իրավիճակներն ու հանգամանքները, Արցախը հայաթափվեց, սակայն ՀՀ-ում բնակություն հաստատած արցախցի ուսուցիչներին տրվող օգնությունը շարունակվում է:

Ստորև ներկայացնում ենք ուսուցիչների նոր շնորհակալագրերը:

***

Ես՝ Եղցահողի միջնակարգ դպրոցի տնօրեն Լենա Գեորգիի Իշխանյանս, շնորհակալությունս եմ հայտնում «Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամի» գործադիր տնօրեն Գուրգեն Մելիքյանին՝ Եղցահող դպրոցի թվով 10 (տասը) ուսուցիչների՝ յուրաքանչյուրին 300 (երեք հարյուր) ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ նվիրաբերելու համար:

Դպրոցի տնօրեն՝ (ստորագրություն, կնիք)
Լ. Ղազարյան 22.03.2024

***

Արցախի Հանրապետության Շուշիի շրջանի «Հին Շենի Ա. Մկրտչյանի անվան հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի ուսուցիչները՝ թվով 6 (վեց) ուսուցիչ, իրենց շնորհակալություն են հայտնում «Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամին»՝ յուրաքանչյուրիս 300 (երեք հարյուր) ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամի օգնություն տրամադրելու համար:

Դպրոցի տնօրեն՝ (ստորագրություն)
Կ. Բարսեղյան 22.03.2024

***

Հարգարժան պրն. Գուրգեն Մելիքյան, Արցախ աշխարհը միշտ բարձր է գնահատել Ձեր հայրենանվեր գործունեությունը՝ միտված հայրենիքի զորացման ու ամրապնդմանը: Դուք մշտապես եղել եք օգնության կարիք ունեցող մարդկանց կողքին: Դուք նորից կանգնեցիք Շուշիի շրջանի դպրոցների աշխատակիցների կողքին և 300 (երեք հարյուր) ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամի չափով աջակցություն կազմակերպեցիք բարդ իրավիճակում հայտնված մարդկանց համար: Թույլ տվեք փոխանցել Շուշիի շրջանի Լիսագորի միջնակարգ դպրոցի աշխատակիցների երախտագիտությունն ու շնորհակալական խոսքերն այս նախաձեռնության համար:

Մենք դեռ կտեսնենք մեր համընդհանուր պայքարի վերջնական հաղթանակը:

Շնորհակալություն:

Լիսագորի միջնակարգ դպրոցի տնօրեն՝
(ստորագրություն, կնիք) Ք. Նասիբյան
22.03.2024

ՏԽՐՈՒՆԻ

«Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամի» հոգաբարձության խորհուրդը խորապես վշտացած է խորհրդի ամերիկյան մասնաճյուղի բարեխիղճ անդամներից մեկի՝ բարեգործ Զարեհ Մարտինի սիրելի մայրիկի՝

ԱՆՆԱ – ԱՆՆԻԿ ՍՏԵՓԱՆՅԱՆ ՄԸԼՐՈՅԻ

մահվան կապակցությամբ և իր անկեղծ ցավակցություն է հայտնում նրան թանկագին հարազատի կորստի կապակցությամբ:

Սիրելի՛ Զարեհ, մխիթարություն, տոկունություն և համբերություն քեզ: Թող վառ մնա մայրիկիդ հիշատակը և նրա լույս հոգին երկնային բարձունքներից հավիտենապես օրհնի քո երկրային հաջողությունները:

ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 289 – Ա որոշման
ԾՐԱԳԻՐ «ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻՑ ՏԵՂԱՀԱՆՎԱԾՆԵՐԻՆ»

1.	Ծրագրի նպատակը	2020-2023 թվականների ընթացքում պատերազմի հետևանքով Լեռնային Ղարաբաղից տեղահանված, մարտական հերթապահություն իրականացրած Հայաստանի Հանրապետության բուհերում սովորող Հայաստանի Հանրապետության և Ջավախքի ուսանողների ուսման և բնակարանի վարձերի, բուժման ծախսերի մասնակի փոխհատուցում, Հայաստանի Հանրապետության Սյունիքի, Վայոց ձորի, Արարատի, Արագածոտնի և Շիրակի մարզերում Լեռնային Ղարաբաղից տեղահանված ընտանիքներին հագուստի, կոշիկի, սննդի և կենցաղային տեխնիկայի տրամադրում, Լեռնային Ղարաբաղի մշակույթի մասին պատմող, Հայաստանի Հանրապետության գիտական, հասարակական, հայ լեզվաբանության, հայոց պատմության, հայ գրականության առարկաներն ուսումնասիրող տարբեր հեղինակների գրքերի տպագրական ծախսերի մասնակի փոխհատուցման նպատակով:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների գծով արտոնություններից:
3.	Բարեգործը	Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամ (քաղ. Երևան, Մխիթար Հերացու 16/48, ՀՎՀՀ՝ 01533651)՝ բարերարներից հանգանակված միջոցներով
4.	Ծրագիրը կատարողը	Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամ (Երևան, Մխիթար Հերացու 16/48, ՀՎՀՀ՝ 01533651)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետություն, բնագավառը՝ սոցիալական
6.	Ծրագրի բյուջեն	80,110,000 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	2020-2023 թվականների ընթացքում պատերազմի հետևանքով Լեռնային Ղարաբաղից տեղահանված անձինք, ընտանիքներ, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության մարզերում ապրող սոցիալապես անապահով ընտանիքներ
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2024 թվականի ապրիլի 30-ից մինչև 2027 թվականի դեկտեմբերի 30-ը
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	1.Լեռնային Ղարաբաղից տեղահանված, Հայաստանի Հանրապետության և Ջավախքի՝ Հայաստանի Հանրապետության բուհերում սովորող ուսանողների ուսման և բնակարանի վարձերի, բուժման ծախսերի մասնակի փոխհատուցում՝ 49,410,000 դրամ, նախատեսվում է իրականացնել 2024 թվականի ապրիլի 30-ից մինչև 2027 թվականի դեկտեմբերի 30-ը. 2.Հայաստանի Հանրապետության Սյունիքի, Վայոց ձորի, Արարատի, Արագածոտնի և Շիրակի մարզերում Լեռնային Ղարաբաղից տեղահանված ընտանիքներին հագուստի, կոշիկի, սննդի և կենցաղային տեխնիկայի տրամադրում՝ 9,000,000 դրամ, նախատեսվում է իրականացնել 2024 թվականի ապրիլի 30-ից մինչև 2027 թվականի դեկտեմբերի 30-ը.

		3.Լեռնային Ղարաբաղից տեղահանված ընտանիքներին սոցիալական աջակցությունն ապահովելու համար «Ֆորդ Բրոնկո Սպորտ» ավտոմեքենայի ներմուծում, որը նախատեսված չէ ծրագրի ավարտից հետո վաճառման կամ օտարման՝ 8,200,000 դրամ, նախատեսվում է իրականացնել 2024 թվականի ապրիլի 30-ից մինչև 2027 թվականի դեկտեմբերի 30-ը. 4.Լեռնային Ղարաբաղի մշակույթի մասին պատմող տարբեր հեղի-նակների, Հայաստանի Հանրապետության գիտական, հասարակական, հայ լեզվաբանության, հայոց պատմության, հայ գրականության առար-կաներն ուսումնասիրող տարբեր հեղինակների գրքերի տպագրական ծախսերի մասնակի փոխհատուցում՝ 13,500,000 դրամ, նախատեսվում է իրականացնել 2024 թվականի ապրիլի 30-ից մինչև 2027 թվ-ի դեկտեմբերի 30-ը:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	1. հագուստի, կոշիկի, սննդի և կենցաղային տեխնիկայի ձեռքբերում՝ 9,000,000 դրամ. 2.«Ֆորդ Բրոնկո Սպորտ» ավտոմեքենայի ներմուծում՝ 8,200,000 դրամ. 3.տպագրական ծառայությունների ձեռքբերում՝ 13,500,000 դրամ:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպչական ծախսեր չեն նախատեսվում:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Համագործակցություն է նախատեսվում Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և տեղական ինքնակառավարման մարմինների հետ:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԳԼԽԱՎՈՐ ԽՄԲԱԳԻՐ՝ ՄՈՒՐԱԴՅԱՆ Ս. Պ. , բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
ԽՄԲԱԳՐԱԿԱԶՄ՝

ԱՎԱԳՅԱՆ Ա., բ. գ. դ., պրոֆեսոր
ՄԵԼԻՔՅԱՆ Գ., բ. գ. թ., պրոֆեսոր
ՍԱՖԱՐՅԱՆ ԱԼ., պ. գ. թ,, պրոֆեսոր
Անստորագիր նյութերը, շարվածքը և ձևավորումը՝ Ս. Մուրադյանի:

Համարի լուսանկարները՝ Զ. Ըռքոյանի:
Տպաքանակը՝ 99: Թերթը բաժանվում է անվճար
Խմբագրության հասցեն՝ Երևան 0025, Աբովյան 52 Ա,
հայ բանասիրության ֆակուլտետ, 212:
Հեռ.՝ 060710617; 055-52-29-36; 55-25-37